ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
№ ՇՄՆ-COP17-26/02

ք.Երևան «15» «05» 2026թ.

Շրջակա միջավայրի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի պ/կ Արկադի Խաչատրյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Պատվիրատու», մի կողմից, և «Բեգրաունդ Փրոդաքշն» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վազգեն Պողոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Կատարող», մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետ՝ «Կողմեր», ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով կողմերի միջև 2025 թվականի դեկտեմբերի 12-ին կնքված «ՇՄՆ-COP17-25/01-1» ծածկագրով պայմանագիրը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **«2026 թվականին Հայաստանում անցկացվելիք «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիայի կողմերի 17-րդ համաժողովի (COP-17) կազմակերպչական ծառայությունների»** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված №1-ով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2. Ծառայությունը մատուցվում է պայմանագրի Հավելված №1-ով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներում՝ փուլային կարգով:

1.3. Ծառայությունը մատուցվում է մինչև 2026 թվականի դեկտեմբերի 20-ը ներառյալ:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1. Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2. Եթե մատուցվել է պայմանագրի Հավելված №1-ում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնել ծառայության համար վճարված գումարը, ինչպես նաև պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի Հավելված №1-ով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.1.4. Ցանկացած ժամանակ իրականացնել Պայմանագրի 2.4.4 կետով նախատեսված Պայմանագրի կատարման համար Հայաստանի Հանրապետության ցանկացած առևտրային բանկում բացված հաշվարկային հաշվի մոնիթորինգ:

2.1.5. Կատարողից պահանջել իրեն հանձնել Պայմանագրի շրջանակներում ձեռք բերված գույքը (հիմնական միջոցները) և արագամաշ առարկաները, ինչպես նաև դրանց ձեռքբերման վերաբերյալ փաստաթղթերը:

2.2. Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1. Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2. Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.2.3. Պայմանագրի շրջանակներում ձեռք բերված գույքը (հիմնական միջոցները) և արագամաշ առարկաները ընդունել Կատարողից:

2.3. Կատարողն իրավունք ունի՝

2.3.1. Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.3 կետում նշված ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3.2. Ծառայության մատուցման յուրաքանչյուր փուլի հանձնման-ընդունման արձանագրությունը նախապես, մինչև Պատվիրատուին ներկայացնելը, քննարկել և համաձայնեցնել Պատվիրատուի կողմից ներկայացված պատասխանատու անձի հետ:

2.3.3. Պայմանագրով իր կողմից մատուցման ենթակա ծառայությունների շրջանակներում պատրաստվող անիմացիոն և տպագրական որոշ նյութերում Պատվիրատուի համաձայնությամբ օգտագործելու Կատարողի տարբերանշանը (լոգո), սոցիալական մեդիա հարթակներում իր պաշտոնական էջերի միջոցով տարածելու Պայմանագրով մատուցվող Ծառայությունների վերաբերյալ հրապարակման ենթակա տեղեկատվությունը:

2.4. Կատարողը պարտավոր է՝

2.4.1. Պայմանագրի Հավելված №1-ով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2. Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3. Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4. Պայմանագրի Հավելված №1.1-ի 2.1 կետի շրջանակներում տաղավարների տարածքների տրամադրման համար Հայաստանի Հանրապետության ցանկացած առևտրային բանկում բացել առանձին հաշվարկային հաշիվ և Պատվիրատուին տրամադրել դրա մոնիթորինգի գործիքակազմ: Մոնիթորինգի իրականացման համար Կատարողը Պատվիրատուի համար խոչընդոտներ չպետք է ստեղծի:

2.4.5. Պայմանագրի շրջանակներում ձեռք բերված գույքը (հիմնական միջոցները) և արագամաշ առարկաները հանձնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված №3.1), տվյալ փուլի շրջանակում մատուցվող ծառայության առնչությամբ Տեխնիկական բնութագրում Պայմանագրով սահմանված կարգով կատարված փոփոխությունների ամփոփումը ներառող համաձայնագրի նախագիծը և հանձնման-ընդունման արձանագրության երկու թղթային օրինակ (Հավելված №3) կամ դրանք ներկայացնում է էլեկտրենային ստորագրությամբ և ուղեկցող գրությամբ Պատվիրատուի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին:

Ընդ որում, Պայմանագրի 4.4 կետում նշված յուրաքանչյուր փուլի շրջանակում մատուցվող ծառայությունների առնչությամբ Տեխնիկական բնութագրում կատարվելիք փոփոխություններն արձանագրվում են հետևյալ եղանակով.

Փոփոխության նախաձեռնությամբ հանդես եկող կողմը սույն կետով նախատեսված էլեկտրոնային փոստի հասցեին է ուղարկում առաջարկվող փոփոխության բովանդակությունը: Փոփոխության քննարկման արդյունքների վերաբերյալ տեղեկությունը տրամադրվում է էլեկտրոնային փոստի միջողով ոչ ուշ, քան վերոնշյալ փոփոխության առաջարկությունն ուղարկվելուն հաջորդող օրը: Սահմանված ժամկետում արձագանքի բացակայության դեպքում առաջարկությունը համարվում է մերժված:

Պատվիրատուի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ minenv@env.am, Կատարողի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ info@background.am: Վերոնշյալ գրագրությունն իրականացվում է միայն սույն կետում նախատեսված էլեկտրոնային փոստերի միջոցով:

3.2. Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3. Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը, իսկ էլեկտրենային ստորագրությամբ ներկայացվելու դեպքում՝ Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին, կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4. Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության ընդհանուր գինը ձևավորվելու է Պայմանագրի Հավելված №1-ով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի ինչպես նաև հետագայում Տեխնիկական բնութագրում Պայմանագրով սահմանված կարգով կատարված հնարավոր փոփոխությունների հիման վրա կնքվելիք լրացուցիչ համաձայնագրերում նախատեսված գների հանրագումարով: Գինը ներառում է նաև Կատարողին վճարման ենթակա հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

4.2. Պատվիրատուն ծառայության դիմաց վճարումները կատարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

4.3. Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

4.4. Ծառայությունների դիմաց վճարումներն իրականացվելու են փուլային եղանակով՝ հանձնման-ընդունման արձանագրությունների և ակտերի հիման վրա, համաձայն Հավելված №3-ով նախատեսված փուլերով:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ Պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2. Պայմանագրի Հավելված №1-ում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի Տեխնիկական բնութագրով սահմանված գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այն հիմնավորված չընդունվելու դեպքում:

5.3. Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4. Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5. Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.3 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6. Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

5.8. Կատարողը պատասխանատվություն չի կրում Պայմանագրի գործողության ամբողջ ընթացքում իր կողմից մատուցման ենթակա ծառայությունների շրջանակներում երրորդ անձանց ազգային, հայրենասիրական, կրոնական, քաղաքական կամ այլ հայացքներից բխող այնպիսի գործողությունների (այդ թվում՝ չարտոնված հավաքների, ցույցերի, պրովոկացիաների, խուլիգանական կամ այլ ոչ իրավաչափ վարքագծի) համար, որոնք թե՛ Կատարողի, թե՛ Պատվիրատուի համար եղել են անկանխատեսելի, անվերահսկելի և անկառավարելի ու որևէ ձևով վնասել են Պատվիրատուի, «2026 թվականին Հայաստանում անցկացվելիք «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիայի կողմերի 17-րդ համաժողովի (COP-17), դրա մասնակիցների բարի համբավին և/կամ Հայաստանի Հանրապետության վարկանիշին:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով և Պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Պատվիրատուի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում փուլային համաձայնագրերը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2. Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4. Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5. Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

7.6. Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

7.7. Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8. Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում, սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9. Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10. Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11. Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին

ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12. Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (Հավելված №4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից բանկին վճարման հանձնարարական տալու օրվան նախորդող օրը:

7.13. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.14. Պայմանագիրը կազմված է 5 (հինգ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Պայմանագրի Հավելվածներ № 1-ը, 1.1-ը, 2-ը, 3-ը, 3.1-ը և 4-ը հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.15. Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.16. Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագր(եր)ի կնքման միջոցով:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Շրջակա միջավայրի նախարարություն	**«Բեգրաունդ Փրոդաքշն» ՍՊԸ**
ք.Երևան, Կառավարական տուն 3	ք.Երևան, Գևորգ Էմինի 8, բն. 35
ՖՆ գործառնական վարչություն	«Արդշինբանկ» ԲԲԸ
ՀՀ 900011066439	ՀՀ 2470094349830000
ՀՎՀՀ 02507198	ՀՎՀՀ 02676654
Էլ.փոստ – minenv@env.am	Էլ.փոստ – info@background.am
Շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղարի պ/կ	«Բեգրաունդ Փրոդաքշն» ՍՊԸ-ի տնօրեն
Արկադի Խաչատրյան	***Վազգեն Պողոսյան***
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	**Կ.Տ.**

Հավելված №1
«15» «05» 2026թ. կնքված
«ՇՄՆ-COP17-26/02» ծածկագրով պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղարի պ/կ
Արկադի Խաչատրյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Բեգրաունդ Փրոդաքշն» ՍՊԸ-ի
տնօրեն
Վազգեն Պողոսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ծառայության				
			մատուցման	
h/h	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	հասցեն	ժամկետը
1	79951112	2026 թվականին Հայաստանում անցկացվելիք «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիայի կողմերի 17-րդ համաժողովի (COP-17) կազմակերպչական ծառայությունների համառոտ տեխնիկական բնութագիրը և ծառայությունների գները՝ համաձայն Հավելված №1.1-ի	ք.Երևան, Պատվիրատուի նշված հասցեներով	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 20.12.2026 թթ.

Հավելված №1.1
«15» «05» 2026թ. կնքված
«ՇՄՆ-COP17-26/02» ծածկագրով պայմանագրի

ՀԱՄԱՌՈՏ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԵՐԸ

2026 թվականին Հայաստանում անցկացվելիք «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիայի կողմերի 17-րդ համաժողովի (COP-17) կազմակերպչական ծառայությունների

COP 17 Կանաչ գոտու /Հոկտ. 18-30/ նախահաշիվ		
Հ/Հ	Ծախսային ուղղությունը կամ նպատակը	Գինը (ՀՀ դրամ)
1	**Գլխավոր պլանավորում և գոտիավորման նախագծում**, ներառյալ՝ Կանաչ գոտու նախնական հատակագծի մշակում, այցելուների քարտեզի նախագծում (Visitor Journey Map), գործառնությունների պլանավորում և ժամանակացույցերի սահմանում	14 400 000
2	**Ֆունկցիոնալ գոտիներ (Functional Zoning),** ներառյալ՝	
2.1	**Ցուցահանդեսային գոտի (Exhibition Zone)**՝ տաղավարների համար ՄՀՀ համապատասխան տարածքների վերափոխում (ադապտացում), պատրաստում (մետաղական կարկասների տեղադրում, բաներապատում), բազային կահավորում, նվազագույն լուսավորության ապահովում[1]	240 000 000
2.2	**Գլխավոր բեմի գոտիներ (Main Stage Zone),** ներառյալ՝	
2.2.1	**Կանաչ գոտու բացման արարողության** բեմականացված ծրագիր և դրա ամբողջ գույքատեխնիկական հագեցվածության ապահովում (վայրը՝ ՄՀՀ համերգային դահլիճ)	240 000 000
2.2.2	**Հիմնական ելույթներ, պանելներ (մինչև 5 մարդ), հանրային երկխոսություն, ստորագրման արարողություններ** (ներառյալ՝ հիմնական բեմ, լեդ, լույս, ձայն, համաժամանակյա թարգմանություն (հայերեն-անգլերեն-հայերեն), AV համակարգ, ուղիղ հեռարձակում, հետնաբեմի կառավարում, կանաչ սենյակ) (վայրը՝ ՄՀՀ համերգային և սպորտային դահլիճների միքս)	300 000 000
2.2.3	**Կանաչ գոտու փակման արարողության** բեմականացված ծրագիր և դրա ամբողջ գույքատեխնիկական հագեցվածության ապահովում (վայրը՝ ՄՀՀ համերգային դահլիճ)	84 000 000
2.3	**Լրացուցիչ գոտիներ (Additional Zones build),** ներառյալ՝	
2.3.1	**Զվարճանքի և մշակութային գոտի (Entertainment & Cultural Zone),** որը կներառի ներկայացման տարածք, մշակութային ցուցադրություններ, երաժշտական և պարային ներկայացումներ, ինտերակտիվ կենսաբազմազանության ինստալյացիաներ	60 000 000
2.3.2	**Գիտության և նորարարության գոտի (Science & Innovation Zone),** որը կներառի ինտերակտիվ գիտական ցուցանմուշներ, համալսարանական և հետազոտական հաստատությունների տաղավարներ, երիտասարդական նորարարական ցուցափեղկեր, փոքր խմբերով ուսուցման աշխատաժողովային տարածքներ, ցուցադրական լաբորատորիաներ	48 000 000
2.3.3	**Մեդիա գոտի (Media Zone),** որը կներառի մեդիայի հավատարմագրման դեսք, մամուլի ճեպազրույցի անկյուն, հարցազրույցի ֆոնային պատ, մեդիա աշխատանքային սենյակ՝ ինտերնետ հասանելիությամբ	24 000 000
2.3.4	**Սննդի կազմակերպման գոտի (F&B Zone),** ներառյալ՝	96 000 000
2.3.4.1	Սննդի կազմակերպման հանրային տարածքի պատրաստում ՄՀՀ նախասրահի աջ կամ ձախ հատվածներին հարող բացօթյա այգիներում՝ համապատասխան սննդակարգերը հաշվի առնելով (բուսակերական, վեգան, ալերգենների նկատմամբ զգայուն տարբերակներ և այլն)	
2.3.4.2	Ցուցահանդեսի մասնակիցներին, ինչպես նաև աշխատաժողովների և հանդիպումների սենյակներ սննդի մատակարարման (սուրճի ընդմիջումներ, թեթև ճաշ և այլն) ծառայությունների ապահովում ՄՀՀ ներսում սննդի պատվիրման և առաքման/մատակարարման համակարգի միջոցով (Exhibitor & Partner Catering Ordering System) և սննդի մատակարարման կատալոգի տրամադրմամբ (գներով, ճաշացանկի տարբերակներով, սննդակարգի պահանջներով և կայունության չափանիշներով)	

[1] Տաղավարների տարածքները մասնակիցներին տրամադրման կարգը, գինը Կատարողը համաձայնեցնում է Պատվիրատուի հետ: Տաղավարների տարածքների տրամադրման գնից Կատարողին մասհանման կարգի և չափի վերաբերյալ կողմերը կնքում են լրացուցիչ համաձայնագիր:

2.3.4.3	Գործառնական անձնակազմի և կամավորների երկու անգամյա սննդի կազմակերպում ՄՀՀ հատուկ առանձնացված տարածքում՝ աշխատանքային օրվա ընթացքում՝ համապատասխան սննդակարգերը հաշվի առնելով (բուսակերական, վեգան, ալերգենների նկատմամբ զգայուն տարբերակներ և այլն):	
2.3.4.4	ՄՀՀ տարածքում ջրի կայանների և սուրճի գոտիների ապահովում	
2.3.5	**Աշխատաժողովների և հանդիպումների սենյակներ (Workshop & Meeting Rooms)**	60 000 000
2.3.5.1	Հանդիպումների սենյակներ (2 հատ)՝ թվային ամրագրումով	
2.3.5.2	30-50 անձի համար նախատեսված աշխատաժողովային սենյակներ (2 հատ)՝ թվային ամրագրումով	
2.3.6	**Արարողակարգային հանդիպումների սենյակ՝** նվազագույն բրենդային կահավորմամբ	18 000 000
2.3.7	**Տեղեկատվական և կողմնորոշման հաբ՝** համապատասխան կահավորմամբ	
2.3.8	**Կամավորների կենտրոն՝** նվազագույն կահավորմամբ	
2.3.9	**Գործառնությունների կառավարման սենյակ՝** համապատասխան կահավորմամբ	
2.3.10	**Մանկական գոտի՝** համապատասխան կահավորմամբ և սպասարկմամբ	21 600 000
3	**Թվային և գրանցման համակարգեր, այցելուների հոսքի կառավարում (Digital & Registration Systems, Visitor Flow (on-site and Digital))**	108 000 000
3.1	Գրանցման հարթակ (web-based Registration platform)	
3.2	QR սքանավորմամբ մուտքի կառավարման համակարգ (QR-based entry management system)	
3.3	Աշխատաժողովների, սեսիաների և հանդիպումների ամրագրման համակարգ (Workshop, session and meeting booking system)	
3.4	Տվյալների անվտանգության ապահովում (GDPR-compliant data management)	
3.5	Տվյալների վերլուծության վահանակ (Data analytics dashboard)	
3.6	Տեղում գրանցման հնարավորություն (on-site registration)	
3.7	Տեղում այցելուների հոսքի կառավարում (Visitor flow & queue systems)	
4	**Բրենդավորում, վիզուալ ոճ (Branding & Look and Feel) և տպագրություն (Printing)**	
4.1	Բրենդինգի ադապտացիա՝ ըստ ուղեցույցի (Branding adaptation)	24 000 000
4.2	ՄՀՀ-ի առաջնամասի և շենքի ամբողջ շրջակայքի դրոշակազարդում բրենդային դրոշներով	
4.3	Դեպի ՄՀՀ տանող երկարավուն աստիճանների աջ և ձախ հատվածների դրոշակազարդում բրենդային դրոշներով	
4.4	Դեկորատիվ ինստալյացիաներ դեպի ՄՀՀ տանող երկարավուն աստիճանների արանքային կենտրոնական միջակայքերում և ՄՀՀ գլխավոր մուտքի մոտ	180 000 000
4.5	ՄՀՀ ֆասադային հատվածի բրենդային ձևավորում	
4.6	ՄՀՀ նախասրահի և հարակից գոտիների վերափոխում, բրենդային ձևավորում և կանաչազարդում	228 000 000
4.7	ՄՀՀ հիմնական դահլիճների և սրահների վերափոխում, բրենդային ձևավորում	
4.8	Թեմատիկ ինտերակտիվ ինստալյացիաներ ՄՀՀ նախասրահում և այլ գոտիներում	
4.9	Արտաքին և ներքին կողմնորոշիչներ և ցուցանակներ ՄՀՀ-ում և հարակից տարածքներում	
4.10	Անձնակազմի և կամավորների համար անվանաքարտերի (բեյջերի) տպագրություն	6 000 000
4.11	Տեխնիկական, սպասարկող անձնակազմի և կամավորների հագուստ (շապիկներ)՝ միջոցառման լոգոյով	
5	**Հրավիրյալ անձնակազմեր, կամավորներ և թարգմանիչներ**	84 000 000
5.1	Գործառնական անձնակազմ	
5.2	Ստեղծագործական անձնակազմ	
5.3	Տեխնիկական անձնակազմ	
5.4	Բանվորական ուժ (մոնտաժման և ապամոնտաժման աշխատանքներ)	
5.5	Կամավորներ (ներառյալ՝ վերապատրաստում)	
5.6	Հայերեն-անգլերեն-հայերեն ընթացիկ թարգմանությունների համար համաժամանակյա թարգմանիչների (2-3 հոգի) ներգրավում (Պաշտոնական այցերի և Կանաչ գոտում տեղի ունեցող երկկողմ հանդիպումների ժամանակ, լրատվամիջոցների հետ աշխատանքի, և ըստ պահանջի՝ բարձր մակարդակի խոսնակներին աջակցելու համար)	

6	**Անվտանգության և մաքրության ծառայությունների ապահովում**	
6.1	**Անվտանգություն ծառայություններ**, ներառյալ՝ հրավիրյալ պահնորդական կազմակերպության պրոֆեսիոնալ անձնակազմի ներգրավվմամբ ՄՀՀ մուտքերի մոտ այցելուների հոսքերի կառավարման և զննման գործընթացների իրականացում՝ իրերի և պայուսակների զննության ռենգենային (X-ray Rapiscan Systems) և կամարաձև մետաղազննիչ սարքավորումներով (Walk through metal detector), ձեռքի մետաղաորսիչների օգտագործմամբ, ՄՀՀ տարածք մուտք գործող տրանսպորտային միջոցների անխոչընդոտ երթևեկության ապահովման, անխափան և կազմակերպված կանգառ կատարելու, հյուրերի իջեցման, նստեցման և կայանման գործընթացների կազմակերպում, կորցրած իրերի հայտնաբերման և հանձնման մեխանիզմի ներդնում	40 800 000
6.2	**Մաքրության ծառայություններ**, ներառյալ՝ հրավիրյալ մաքրող անձնակազմի (ներառյալ՝ մաքրուհիներ՝ մինչև 50 հոգի, մենեջերներ՝ 5 հոգի) ներգրավվմամբ ՄՀՀ արտաքին և ներքին բոլոր գոտիների, սրահների, դահլիճների և սանհանգույցների մաքրության կազմակերպում՝ մաքրման որակյալ նյութերի, օդը թարմացնող սարքերի և բույրերի, տարբեր տրամաչափի աղբամանների, հիգիենայի և այլ պարագաների ապահովմամբ, ինչպես նաև ՄՀՀ-ին հարող բացօթյա հատվածներում բիոզուգարանների տեղադրում, թափոնների կառավարում և աղբի հեռացման կազմակերպում	14 400 000
7	**Անխափան էլեկտրասնուցման կազմակերպում**	120 000 000
7.1	ՄՀՀ-ում առկա անխափան էլեկտրասնուցման գեներատորների շահագործում և ընթացիկ սպասարկում՝ համապատասխան մասնագիտացված անձնակազմի ներգրավվմամբ	
7.2	Լրացուցիչ 500 ԿՎԱ հզորություն ունեցող անխափան էլեկտրասնուցման գեներատորների (բեքափով աշխատող) (ներառյալ՝ ռեզինե մեկուսիչով պղնձե մալուխների) ապահովում և դրանց աշխատացման ծառայությունների (եվրոդիզել վառելիքով) կազմակերպում և ընթացիկ սպասարկում (ֆիլտրերի փոխարինում և այլն)՝ համապատասխան մասնագիտացված անձնակազմի ներգրավվմամբ	
7.3	ՄՀՀ-ի ամբողջ տարածքում /շենքի, առանձին գոտիների, սրահների, դահլիճների, տաղավարների, տեխնիկայի/ էլեկտրոմոնտաժային աշխատանքների իրականացում և անխափան էլեկտրոսնուցման ապահովում, ներառյալ՝ հոսանքի լրացուցիչ կետերի, մալուխների, համապատասխան վարդակների, երկարացման լարերի և այլն	
7.4	Աշխատանքային գոտիներում անխափան սնուցման սարքերի (UPS) և լիցքավորման կայանների ապահովում	
8	**Կ.Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրի վարձույթ (5 հոկ. - 10 նոյ.)**	66 000 000
9	**ՄՀՀ տարածքում ենթակառուցվածքային հարմարեցումների (ներառյալ՝ վերանորոգման և վերակառուցման) իրականացում, գույքային համալրում և կահավորում**	48 000 000
10	**ՄՀՀ տարածքում լեդ էկրանների, լուսային սարքավորումների, ձայնային սարքավորումների, բեմահարթակների ապահովում և ընթացիկ սպասարկում**	60 000 000
11	**Կանաչ գոտու առանձին սոցիալական էջերի ստեղծում, կոնտենտի պատրաստում՝ ամենօրյա ռեժիմով, և դրանց առաջմղում (SMM)՝ ներառյալ գովազդ**	16 800 000
12	Կազմակերպչի շահույթ /հոնորար/	240 000 000
	Ընդհանուր՝ ԱԱՀ ներառյալ	**2 442 000 000**

Հավելված №2
«15» «05» 2026թ. կնքված
«ՇՄՆ-COP17-26/02» ծածկագրով պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղարի պ/կ
Արկադի Խաչատրյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Բեգրաունդ Փրոդաքշն» ՍՊԸ-ի
տնօրեն
Վազգեն Պողոսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ՓՈՒԼԵՐ

Փուլեր	Մատուցված ծառայություն	Վճարվող տոկոսներ
I փուլ	Կնքված պայմանագրեր, կատարված նախագծային քարտեզագրման, գոտիավորման աշխատանքներ, բրենդինգի վիզուալ ադապտացիայի և գործառնական պլանավորման աշխատանքներ, այդ թվում ժամանակացույց	Տեխնիկական բնութագրով սահմանված ընդհանուր գնի 20 տոկոս
II փուլ	Տաղավարների տրամադրման գործող ձևաչափ, գործարկված թվային գրանցման համակարգ, ստեղծված սոցիալական էջեր	Տեխնիկական բնութագրով սահմանված ընդհանուր գնի 10 տոկոս
III փուլ	Բացման և փակման արարողությունների բեմականացված ծրագրի և մշակութային ընթացիկ միջոցառումների մշակված սցենար	Տեխնիկական բնութագրով սահմանված ընդհանուր գնի 20 տոկոս
IV փուլ	Միջոցառման անցկացման վայրում իրականացված ֆիզիկական, տեխնիկական և ենթակառուցվածքային պատրաստման աշխատանքներ՝ ֆունկցիոնալ գոտիների անհրաժեշտ կառուցապատումներով, հարմարեցումներով և գույքատեխնիկական հագեցվածությամբ; միջոցառումների անցկացման ձևավորված/բրենդավորված վայր և արտաքին տարածքներ	Տեխնիկական բնութագրով սահմանված ընդհանուր գնի 30 տոկոս
V փուլ	Ծառայությունների մատուցման պարտավորությունների (այդ թվում՝ միջոցառման անցկացման վայրերում ապամոնտաժման աշխատանքների, տարածքների վերականգնման, ամբողջ գույքի և տեխնիկական սարքավորումների դուրսբերման իրականացում) ողջ ծավալով կատարում	Տեխնիկական բնութագրով սահմանված ընդհանուր գնի 20 տոկոս

Հավելված №3
«15» «05» 2026թ. կնքված
«ՇՄՆ-COP17-26/02» ծածկագրով պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Շրջակա միջավայրի նախարարություն	**«Բեգրաունդ Փրոդաքշն» ՍՊԸ**
ք.Երևան, Կառավարական տուն 3	ք.Երևան, Գևորգ Էմինի 8, բն. 35
ՖՆ գործառնական վարչություն	«Արդշինբանկ» ԲԲԸ
ՀՀ 900011066439	ՀՀ 2470094349830000
ՀՎՀՀ 02507198	ՀՎՀՀ 02676654

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«_____» «_____» 2026թ.

Պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) անվանումը՝ ***Պեկության կարիքների համար ծառայության մատուցման պայմանագիր***
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «15» «05» 2026թ.
Պայմանագրի համարը՝ ՇՄՆ-COP17-26/02
Պատվիրատուն և Կատարողը հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 2026թ. դուրս գրված № _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Կատարողը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

№	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված №3.1
«15» «_____» 2026թ. կնքված
«ՇՄՆ-COP17-26/02» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ №
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ Շրջակա միջավայրի նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) և «Բեգրաունդ Փրոդաքշն» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև «15» «05» 2026 թվականին կնքված № ՇՄՆ-COP17-26/02 գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը «_____» «_____» 2026 թվականին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված №4
«15» «05» 2026թ. կնքված
«ՇՄՆ-COP17-26/02» ծածկագրով պայմանագրի

ԾԱՆՈՒՑՈՒՄ

ֆինանսական գործակալի անվանումը հայտնում է, որ.

1. Շրջակա միջավայրի նախարարության և «Բեգրաունդ Փրոդաքշն» ՍՊԸ-ի միջև «15» «05» 2026թ. կնքված «ՇՄՆ-COP17-26/02» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և «_____»_-ի միջև «___» «_____» 2026թ. կնքվել է «_____» ծածկագրով ֆակտորինգի պայմանագիրը,
2. համաձայն Պայմանագրի 7.12 կետով սահմանված պահանջներին:

ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

«___» «_____» 2026 թ.